600.0451.18.10.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2017 թվականի №451Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի №373Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2017 թվականի սեպտեմբերի 28-ին «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №68Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0558 լիցենզիայով (այսուհետ՝ №0558 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը երեք տարի ժամկետով,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 39-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի,

գ) Հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 6-ի №68Ա որոշմամբ ԼԷ №0558 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել էր մեկ տարի վեց ամիս ժամկետով, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն

որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել ԼԷ №0558 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը մեկ տարի վեց ամիս ժամկետով՝ Որոշման մեջ «2017 թվականի հոկտեմբերի 21-ը» բառերը փոխարինելով «2019 թվականի ապրիլի 21-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0558 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Աջիբաջ-6» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի մայիսի 30-ի O.AB.100.11CB.ESC.4.1936.16 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարից մեկ միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2019 թվականի հունիսի 5-ը գործողության ժամկետով:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 21-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
18 հոկտեմբեր 2017թ.